

## ԻՄ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ ամառ երբ գրում էի «Ունէր իրաւունքը», շարունակ իմ առջև տեսնում էի սեղմուած բռունցքներ, կրճտուող ատամներ, կատաղութեամբ վառուած աչքեր: Ես գիտէի, որ հայ հասարակութեանը տալիս եմ մի երկ, որի հիմնական գաղափարը առ նուազը պիտի խորթ թուայ նրա մեծամասնութեան և առաջացնի փոթորիկ, եթէ մինչև անգամ հեղինակի միտքը ճիշտ ըմբռնուի:

Եղան վայրկեաններ, երբ կամենում էի երկս կիսատ թողնել և ձգել մի կողմ: Բայց մի ներքին ձայն շարունակ շնչում էր ինձ, թէ չունիմ իրաւունք այդպէս անելու, թէ գրողի համար չը կայ և չը պիտի լինի աւելի բարձր դատաւոր, քան նրա սեպհական աշխարհահայեացքը, թէ ոչ մի հասարակական կարծիք կամ նախապաշարմունք չը պիտի ճնշի նրա հոգու ազատութիւնը և թէ նրա համար բարոյական աններելի յանցանք է երկչոտութեամբ թագցնել ուրիշներից այն, ինչ-որ ինքն է ճշմարտութիւն համարում սոսկ այն պատճառով, որ այդ ճշմարտութիւնը գիւր չը պիտի գայ մեծամասնութեանը:

Իմ ամբողջ գրական գործունէութեան ընթացքում ես հետեւել եմ իմ հոգու այս ձայնին, գրել ու պաշտպանել եմ այն գաղափարները, որոնք իմ անձնական համոզմունքով կամ իմ սեպհական բնազդումով եմ բարձր համարել: Ես հասարակական կարծիքը երբէք ինձ համար կուռք չեմ դարձրել, չեմ պաշտել իբրև անխախտելի սրբութիւն այս կամ այն իշխող գաղափարը կամ աշխարհահայեացքը: Ուստի չը կամեցայ և չէի կարող այս անգամ էլ ստրկացնել իմ հոգու ձայնը ուրիշների աղաղակներին ու գողում-գողումներին և պէտք է ասէի այն, ինչ-որ ինքս էի համարում ճշմարտութիւն:

Իսկ ճշմարտութիւնն այս դէպքում այն էր, թէ հասել է, վերջապէս, ժամանակը, երբ անհրաժեշտ է հրապարակ հանել հայ կնոջ ինքնուրոյնութեան խնդիրը, թէ ընտանեկան կեանքի լաւագոյն համարուած պայմաններն անգամ մեզանում վերաւորական և ստո-



րացուցիչ են կնոջ համար և թէ բացի ամուսնական պարտականութիւններից, մայրական զգացումից, բացի լաւ հագնուելուց, կուշտ ուտելուց, շքեղ կահ-կարասուց, ադամանդներից, ամուսնու հոգացողութիւնից ու փայփայանքներից, բացի շրջապատողների սիրուց ու յարգանքներից, մի խօսքով, բացի բոլոր այն պայմաններից, որոնց համագումարը տիրող հասարակական կարծիքը համարում է երջանկութիւն—մտածող, զգայուն և բարոյական կնոջ համար կայ և մի ուրիշ բան: Դանրա անհատական ինքնուրոյնութեան զգացումն է: Լինել հաւատարիմ ամուսին—կնոջ համար համարում է պարտաւորական: Մայրական զգացումը բնական է և անյաղթելի, նաև սուրբ: Բայց այս չէ կնոջ բուն երջանկութեան հիմնաքարը: Թող բարոյախօսները ընտանեկան կեանքով չը բաւականացող կանանց հրաւիրեն հասարակական գործունէութեան ասպարէզը և բարձրաձայն գոռան ու հաւատացնեն, թէ այդտեղ նրանք կարող են գտնել անհատական երջանկութիւն: Թող այդ բարոյախօսները մօլեռանդութեամբ քարոզեն, թէ կինը, ինչպէս և տղամարդը, կարող են ապրել և լինել երջանիկ միայն այն պարտականութիւնները կատարելով, որոնց բարդել է և բարդում է նրանց վրայ հասարակական բարոյական հայեացքների միջին մակերևութը: Այդ բարոյախօսների համոզումները չեն կարող ինչ համար ղեկավար լինել և ոչ որ և է ներգործութիւն ունենալ իմ սեպհական գաղափարների վրայ: Կնոջ, ինչպէս և տղամարդի, բուն երջանկութեան հիմնաքարը թագնուած է նրա սեպհական հոգու խորքում, այնտեղ, ուր չի կարող մուտք գործել ոչ ամուսնու սէրը, ոչ նոյն իսկ մայրական պարտաւորութիւնների գիտակցութիւնը և ոչ նամանաւանդ հասարակական կարծիքի դատաստանը: Եթէ կայ կնոջ հոգու խորքում սեպհական անհատական երջանկութեան գիտակցութիւն՝ տոգորուած անձնական ինքնուրոյնութեան զգացումով—նա երջանիկ է: Եթէ չը կայ այդ—նրա կեանքը հիմնուած է կեղծիքի, խաբէութեան ու ստի վրայ:

Ահա այս կեղծիքի, խաբէութեան և ստի դէմ է բողոքում իմ հերոսուհին: Սա իմ սնուփ երեւակայու-



Թեան պտուղ չէ, այլ կեանքում դիտուած և ուսումնասիրուած երևոյթ, որ ինձ վրայգործել է խոր տպաւորութիւն: Ես նկատել եմ, որ մեզանում օր օրի վրայ աւելանում է այն կրթուած կանանց թիւը, որոնք մի խուլ պատերազմ են յայտնել տղամարդին իրանց անհատական ինքնուրոյնութեան համար: Այդ կանայք ըստ հոգեկտն ոյժերի բաժանուած են երեք կարգերի: Մեծամասնութիւնը չի դիմանում կռուի ծանրութեանը, շուտով ընկճուած է, հաշուում իւր դրութեան հետ և խառնուած ամբոխին: Իրանք այն օղորմելիներն են, որոնց մէջ առիական բռնակալութեան ոգին դեռ գորեղ է: Միւսներն աշխատում են իրանց անհատական կեանքի ձախորդութիւնը մոռանալ մի որ և է զբաղմունքի կամ, այսպէս կոչուած, հասարակական գործունէութեան մէջ, որ մեր սահմանափակ կեանքում հաւասար է գերօրի: Այդպիսիների թիւը մեծ չէ, և հէնց սրա մէջ է կայանում նրանց արժանաւորութիւնը: Սակայն, իբրև անհատներ, այդպիսիները շատ քիչ ոգևորութիւն են ներշնչում վիպասանին ու դրամատուրգին, որովհետև մի կեղծ դրութիւնը գերադասում են միւս կեղծ դրութիւնից, մի չարիքը փոխարինում են միւս չարիքով իրանց հոգեկան ոյժերի սակաւութեան պատճառով: Իրանք ինքնախաբէութեան զոհեր են, իլլիւզիայով ապրող օղորմելիներ:

Բայց կան շատ հազուադիւտ կանայք, որոնք կռիւն ազդարարում են համարձակ, տանում են նրան մինչև վերջը կամ յաղթում կամ կործանուում: Այսպիսիներից է իմ հերոսուհին, որի անկեղծութիւնն ես կամեցել եմ ասպարէզ հանել, չը նայելով հայ հասարակութեան նոյն իսկ կրթուած դասակարգի մէջ տիրող հայեացքների ընտանեկան կեանքի մասին: Երկուսից մէկը — կամ պէտք է խեղդէի իմ մէջ անկեղծութեան զգացումը, լինէի փարիսեցի, շօյէի հասարակական կարծիքի ինքնահաւանութիւնը և բռնակալութիւնը, կամ պէտք է յանուն ճշմարտութեան և անկեղծութեան ասպարէզ գալի և ինքս ինձ ենթարկէի ամբօխի հալածանքին...

Ես գերադասեցի վերջինը: Շարունակեցի գործս,



աւարտեցի և թատրոնական սեզօնի սկզբում լանձնեցի Թիֆլիզի Հայոց Դրամատիքական Ընկերութեան:

Ստկայն պիեսի հէնց առաջին փորձին նկատեցի նրա թերութիւնները: Նկատածս վերաբերում էր ոչ դրամայի հիմնական գաղափարին, այլ ձևին: Պէտք էր մի քանի տեսարաններ կրճատել, միւսները ընդարձակել ու փոփոխել: Անհրաժեշտ էր թանձրացնել հերոսուհու հոգեկան տանջանքներն և աւելի շեշտել նըրանց: Բացի դրանից, հարկաւոր էր պիեսից արտաքսել սիրային տարրը, որ հիմնական գաղափարիս համար առանձին արժէք չունէր:

Ներկայացումից երեք օր առաջ խնդրեցի Դրամատիկական Ընկերութեան Վարչութեանը յետ դարձնել պիեսս և թոյլ տալ ինձ ծրագրածս փոփոխութիւններն անելու: Դրա համար հարկաւոր էր ընդամենն երեք շաբաթ ժամանակ: Վարչութիւնը սկզբունքով համաձայն էր յարգել խնդիրս, բայց լետաձգել ներկայացումն անկարելի համարեց, որովհետև յայտարարութիւններն արդէն ցրուած էին, տոմսակները վաճառուում էին, չը կար մի ուրիշ յարմար պիես, որ ներկայացուէր իմ փոխարէն նշանակուած օրը: Հարկաւ, եթէ ես խիստ գործադրէի իմ հեղինակային իրաւունքները, Վարչութիւնը չէր պնդի իւր տսածի վրայ, բայց չէի կամենում Դրամատիկական Ընկերութեանը նիւթական վնաս պատճառել, ուստի թոյլ տուեցի պիեսս բեմ հանել տյնպէս, ինչպէս կար:

Այս, ի հարկէ, մի թուլութիւն էր իմ կողմից, որ երբէք ինձ չեմ ների և երբէք խորհուրդ չեմ տալ ուրիշ հեղինակներին թոյլ տալ իրենց նոյնը: Ես սխալուեցի մանաւանդ, որ դադարեցի փորձերին ուշադիր հետևելուց և պիեսիս վիճակը լանձնեցի ճակատագրի հաճութիւն: Այսպէս թէ տյնպէս, պիեսս ներկայացուեց միայն չորս փորձից յետոյ, որոնցից միայն մէկը—վերջինը—կարելի է քիչ թէ շատ կանոնաւոր համարել, միւսներն իսկապէս հասարակ ընթերցանութիւն էին: Աշխարհի բոլոր թատրոններում նոր պիեսները փորձուած են ամիսներով կամ գոնէ շաբաթներով խստութեամբ, և միայն այն ժամանակ են ներկայացոււմ, երբ բոլոր դե-



րասանները ոչ միայն անգիր գիտեն իրանց գերերը, այլ և մանրամասնորէն ուսումնասիրել են նրանց բնաւորութիւնները, ճիշտ ըմբռնել և թափանցել հոգեբանական նրբութիւնները: Բայց հայերն ամեն բանում սեպհական կարգ ու կանոնն ունին...

Քաւ լիցի, որ այս խօսքով դժկամակութիւն յայտնեմ մեր յարգելի դերասաններին: Ընդհակառակը, շատ շնորհակալ եմ նրանցից այն ընկերական անկեղծութեան համար, որով նրանք միշտ վերաբերուել և վերաբերւում են դէպի ինձ: Սակայն որքան բարի լինէր նրանց ցանկութիւնն իմ պիեսի վերաբերմամբ, չէին կարող անել անհնարինը, - երկու երեք կիսատ-պոտտ փորձերով պատրաստել մի նոր գլուխ: Ես անչափ գոհ կը լինէի, եթէ Ունէր իրաւունքի փորձերի վրայ գործ դնուէր դէթ կէսն այն ջանքերի, որ գործ դրուեցին «Եւգինէի» փորձերի վրայ: Այն ինչ, իմ կարծիքով, Ունէր իրաւունքն աւելի բարդ պիես լինելով, աւելի ուշագիւր վերաբերմունք էր պահանջում:

Ինչ և է, պիեսը ներկայացուեց 1902 թուականի Հոկտեմբերի 7 ին: Ես շնորհակալ եմ հասարակութիւնից. նա հետաքրքրուել էր իմ երկով աւելի, քան արժանի էր այն: Գոհ եմ նաև, որ թատրոնը լեցրել էր մեծ մասամբ այն դասակարգի, որն առ հասարակ հայ թատրոնին, հայ գրականութեանն ու հայ մամուլին նայում է արհամարհանքով և երբէք չի հետաքրքրւում նրանց վիճակով: Ես այս հանգամանքը շեշտում եմ, որ ոսես, թէ հասարակութեանը կարելի է թատրոն գրաւել միայն ինքնուրոյն պիեսներով, եթէ միայն նրանց նիւթը ժամանակակից կեանքից է վերցրուած... Խօսքս այդ դասակարգի մասին է, որ ունի ճաշակ, ունի միջոց թատրոնը բարձրացնելու իւր այժմեան աննախանձելի դրութիւնից և չի բարձրացնում...

Ներկայացման երեկոյ դժուար էր իմանալ հասարակութեան հասկացող մասի տրամադրութիւնը: Հարկաւ, ես այնքան փորձառութիւն ունէի, որ չէի կարող ոչ բռնուն ծափահարութիւններով ու ցոյցերով կուրանալ և ոչ ոմանց լուրթեամբ ու անկիւններում սրտայայտուած մըմըրթոցով վերաւորուել: Թէ մէկն ու թէ



միւսը լուրջ քննադատութեան նշաններ չէին: Իսկական կարծիքը, խելացի դատավճիռը ես լսեցի ներկայացման օրից շատ ժամանակ անցած հասարակութեան մի փոքրածիւ մասից, ուր կայ լուրջ հասկացողութիւն թատրոնի և գրականութեան մասին և որի կարծիքը միայն ինձ համար դատավճռի նշանակութիւն կարող էր ունենալ: Եւ ահա ինչ լսեցի այդ հասկացող փոքրամասնութիւնից բերանացի: «Ունէր իրաւունքի» հիմնական գաղափարն անվիճելի է, հոգեբանօրէն ճիշտ, բայց արծարծուած է շտապ և անփոխ: Պիեսի բեմական արժանաւորութիւնները կասկածաւք չեն յարուցանում, բայց մի քանի տեսարաններից, որոնք սառցնում են հանդիսականի տպաւորութիւնը: Հերոսուհու հոգեկան տանջանքները ուժեղ չեն ընդգծուած (նոյնը ես էի նկատել): Նա ունի իրաւունք յանուն անհատական ինքնուրոյնութեան բողոքելու իւր դրութեան դէմ, նոյն իսկ կռուել, հռչակելով իրան անբաղդ, բայց զաւակներից բաժանուելը վիճելի է: Հայ կինը գոնէ չի կարող ունենալ այդքան քաջութիւն:

Այս էր ընդհանուր խօսքերով իմ անկողմնապահ դատաւորների վճիռը: Մի վճիռ, որ չէր կարող արտայայտուել լրագրական յօդուածներում, վասն զի այդ մարդիկ կապ չունին հայ մամուլի հետ:

Ես մասամբ համաձայն եմ այս կարծիքին, մասամբ ոչ: Համաձայն եմ, ի հարկէ, որ իմ պիեսն ունէր և այժմ իսկ, վերամշակուելուց յետոյ կունենայ գրականական և բեմական թերութիւններ: Եւ ես թեթեւամիտ կը լինէի, եթէ այս տեսակէտից սկսէի նրան պաշտպանել: Գեղարուեստական երկի միակ փաստաբանն ինքը երկը կարող է լինել, եթէ, ի հարկէ, արժանաւորութիւններ ունի: Բայց համաձայն չեմ և երբէք չեմ կարող համաձայնուել այն մտքի հետ, թէ մի խելօք, ինքնաօրէն և զգալուն կին, լինի նոյն իսկ հայուհի, երբ մի տնգամ արդէն զգացել է իւր դրութեան կեղծիքը, իւր ամուսնական կեանքի նեղքին քայքայումը—չի կարող վարուել համարձակ և խորտակել նախապաշարմունքների շղթան յանուն անհատական ինքնուրոյնութեան: Հարկաւ, սրա համար անհրաժեշտ է բացառիկ բարոյա-



կան ոյժ, մի հոգեկան անվեհերութիւն, որ անհասկանալի ու խորթ է միջին խելքի և թույլ կամքի տէր հասարակ կանանց համար, բայց այսպիսիներէն պիտի ընտրէի հերոսուհի: Հերսէլին հերոսուհի է, ուրեմն և ոչ ամբոխի բարոյական ոյժի միջակ արտադրութիւն:

Ահա ինչու պիտիս հիմնական գաղափարը թողնում եմ անխախտ հակառակ լսեցածամանութեան: աշխարհահայեցողութեան, որի կանոններն ինձ համար, ի հարկէ, պարտաւորական չեն կարող լինել: Ես աւելի եմ անում — դուրս եմ ձգում պիտիս միջից սիրային տարրը: Այժմ իմ հերոսուհին բաժանւում է իւր ամուսնուց առանց ուրիշ տղամարդի սիրելու, բաժանւում է միայն այն պատճառով, որ չի ուզում և չի կարող կեղծել: Պատանեկական հասակում մոլորուելով, իւր կեանքը կապել է գրեթէ մի անձանօթ մարդու հետ: Վեց տարի ապրել է նրա հետ բուսական կեանքով և երբ միտքը հասունացել է, երբ հոգու աչքերը բացուել են — տեսել է իւր դժբաղդութիւնը: Նա անկեղծ կամեցել է սիրել իւր օրինական ամուսնուն — չի կարողացել և այժմ, երբ զգում է իւր անբաղդութիւնը, բնականաբար սկսում է ատել իւր անբաղդութեան պատճառ ամուսնուն: Ատելութիւնը փոխւում է զգուանքի, զգուանքը երկիւղի: Իբրև անկեղծ ու համարձակ հոգի, նա չի ուզում խաբել ոչ իրան, ոչ ամուսնուն, նա այն ողորմելի կանանցից չէ, որոնք հասարակական կարծիքի սարսափից և շատ անգամ մի փոր հացի համար շարունակում են կեղծել ու ստել նոյն իսկ այն ժամանակ, երբ իզուր են իրանց բարոյական ստրկութիւնը, իրանց դրութեան ստորութիւնը: Թող այդպիսիներն աշխատեն իրանց հոգեկան ապիկարութիւնը քոյակել մայրական պարտականութեան զգացումով, բայց Հերսէլին չի կամենում հետևել նրանց օրինակին, չի ուզում կեղծել ու ստել: Նրա տեղակէտից անբարոյականութիւն է մնալ այն մարդու յարկի տակ, որից զգում է ու վախենում... Սակայն թողնենք, որ այս բոլորը բացատրի ինքը պիտեւ: Ես չեմ հերքում, որ իմ հերոսուհու գաղափարը գաժան է և անողոք, բայց անկեղծ է — ահա ինչն է գլխաւորը: Եւ թող մեր բարոյախօսներն



այսուհետեւ եռապատիկ անբարոյական համարեն իմ երկը, փարիսեցութիւնն երբէք չի ղեկավարել և չի կարող ղեկավարել իմ գրիչը:

Ի դէպ, մի քանի խօսք այդ բարոյախօսների հասցէին, որպէս զի նրանք չը վերաւորուին ինձանից: Ես ակնարկում եմ հայ լրագրներում և մի ամսագրում տպուած «քննադատութիւնների» խորամիտ հեղինակներին: Սրանք էին, որ մի զարմանալի ներդաշնակութեամբ «Ունէր իրաւունքը» հռչակեցին անբարոյականութիւն ուղբեր են այդ մարդիկ — չը գիտեմ և ճանաչելու էլ ցանկութիւն չունիմ, բայց կարգացել եմ նրանց բոլոր խորիմաստ դատողութիւնները: Մի լրագիր, որ միւսներին տաւ ի թշնամաբար է տրամադրուած դէպի ինձ և որն ամեն առիթից օգտուում է որպէս զի ինձ վրայ մի կտոր ցեխ շալտի, այս անգամ ցոյց տուեց զարմանալի տոկունութիւն իւր յարձակումների մէջ: Այդ լրագիրը, որ չը գիտեմ ինչու դեռ ողտտամիտ է համարոււմ, իմ պիեսի գաղափարի վնասներմամբ անհամեմատ աւելի մտաւախութիւն և նեխուած պահպանողականութիւն ցոյց տուեց, քան այն ամենքը, որոնց նա պահպանողական և խաւարամիտ է համարոււմ: Նա այնքան վշտացել էր իմ պիեսին, որ չը բաւականացաւ մի քանի վայրիվերոյ «ռեցենզիաներով», այլ ահա վեց ամիս է շարունակ յարձակոււմ է ինձ վրայ թէ բացարձակ և թէ տողամէջ, չը խնայելով երբեմն նոյն իսկ իմ անձնական պատիւը: Բանն այնտեղ հասաւ, որ նա յարձակուեց իմ պիեսի վրայ և՛ այն մարդկանց բերանով, որոնք ոչ տեսել էին իմ երկը բեմի վրայ և ոչ կարգացել: Եւ իւր կատաղի յարձակումների ժամանակ լրագիրը չամաչեց մինչև անգամ աղաւաղել իմ պիեսի բովանդակութիւնն իւր միամիտ ընթերցողների միտքը շփոթելու համար: Այսպէս, օրինակ, «ազատամիտ» լրագիրը մի քանի անգամ կրկնեց, թէ իբրև իմ հերոսահին *առում* է իւր գաւաղներին և բացարձակ խոռոտովանում իւր ատելութիւնը: Այնուհետեւ, այդ լրագիրը մատի փաթաթան դարձրեց Հերսէլի անփոյթ կերպով արտասանած այս դարձուածը. «ես այնպիսի տրամադրութեան մէջ եմ այժմ, որ պատրաստ եմ սիրել գեղեցիկը նոյն իսկ յանցանքի մէջ»:



Ես պիտեսիս այս տեղերը թողնում եմ անփոփոխ։ Ով ընդունակ է իւր կարգացածը ճիշտ ըմբռնելու, նա կը տեսնի, որ իմ խելօք «քննադատները» մի յիմար սուտ են ասում, թէ իբր Հերսիլին ատում է իւր գաւակներին իսկ ով ընդունակ չէ - այդպիսուն մի բան հասկացնելը դժուար է։

Լրագրական իմաստականքի մէջ գտնուեցին և այնպիսիները, որոնք ասացին, թէ ինչու ես Հերսիլին իւր ամուսնուց մի որևէ հասարակական գաղափարի անունով չեմ բաժանում։ Յիշում եմ, երբ այդ կտորը ինձ մօտ կարգաց բարեկամներիցս մէկը, վրդովուեց մինչև հոգու խորքը։

— Հասկանում եմ, — ասաց նա, — այդ տեսակ մարդկանց գաղափարները։ Այդպիսիների համար գաղափար է միայն այն, ինչ-որ այսօր վաճառւում է ամբոխին հայ գրականութեան ստորին շուկայում։ Եթէ դու քո հերոսուհուն ստիպէիր բաժանման ժամանակ արտասանել մի հայրենասիրական ճառ, դիցուք այսպիսի մի բան. «մնացէք բարեւ, իմ սիրելի գաւակներ, ես գնում եմ տաճկահայ որբերին խնամելու» և այլն այսպիսի ճշուճրուան խօսքեր, կարժանանայիր այդ երևելի «գաղափարականների» հրճուանքին։ Խեղկատակներ, որքան խղճալի են այդ մարդիկ իրանց անդրըրհեղեղեան հասկացողութեամբ գեղարուեստական գրականութեան մասին... Բայց փոյթ չէ, կանցնի ժամանակ, մտքերը կը զարգանան, զգացումները կը նրբանան, և այն ժամանակ կը կազմուի ճիշտ գաղափար գեղարուեստական գրականութեան նշանակութեան մասին։ Այն ժամանակ կը հասկացուի, թէ գեղարուեստական երկի հեղինակը չը պիտի երբէք ղեկավարուի ամբոխի ճաշակով, թէ թըշուառ է և խղճալի այն գրողը, որ շոյում է ամբոխի զգացումները և ինչպէս մի չարչի, գնում ու վաճառում է շուկայում այն ապրանքը, որի ընթացիկ պահանջը կայ... Այն ժամանակ կը հասկացուի, որ գեղարուեստական գրականութիւնը միայն մի Աստուած պիտի ունենայ — յաւիտենական ճշմարտութիւնը...

Ես միանգամայն համաձայն եմ բարեկամիս ասածներին և յոյս ունիմ, որ հայ գրականութեան համար հեռու չէ այդ օրը...

ԵՐԵՎԱՆԶԱԴԷ